

**Հավելված N<sup>2</sup>**  
*Հայաստանի Հանրապետության հանրային  
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի  
2017 թվականի մայիսի 31-ի N218Ը որոշման*

**ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ**

\_\_\_\_\_ 20 թվական  
(կնքման վայրը)

Մատակարարը՝ \_\_\_\_\_

\_\_\_\_\_ (կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը)

ի դեմս \_\_\_\_\_

\_\_\_\_\_ (անունը, ազգանունը, պաշտոնը, լիազորված լինելու դեպքում  
լիազորագրի տվյալները)

որը գործում է լիազորագրի հիման վրա, մի կողմից,  
(գործունեությունը կարգավորող փաստաթղթի անվանումը)

և Սպառողը՝ \_\_\_\_\_

(անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները,  
իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը, ներկայացուցչի անունը,  
ազգանունը, պաշտոնը, լիազորված լինելու դեպքում լիազորագրի տվյալները)

մյուս կողմից, համատեղ կոչվելով Կողմեր, ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) հաստատած՝ Էլեկտրական Էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններով (այսուհետ՝ ԷՄՕԿ), սույն պայմանագրով և այլ իրավական ակտերով, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

---

1. Սույն պայմանագրի համաձայն Մատակարարը պարտավոր է Սպառողին մատակարարել Էլեկտրական Էներգիա, իսկ Սպառողը՝ վճարել մատակարարված Էլեկտրական Էներգիայի դիմաց:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ՅԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

---

2. Կողմերը ղեկավարվում են «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով, ԷՄՕԿ-ով, սույն պայմանագրով և այլ իրավական ակտերով:

### 3. Մատակարարը պարտավոր է՝

1) \_\_\_\_\_

հասցեում Սպառողին մատակարարել Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված որակի Էլեկտրական Էներգիա՝ համաձայն սույն պայմանագրի №1 հավելվածով սահմանված տեխնիկական պայմանների և (կամ) №2 հավելվածով սահմանված Էլեկտրամատակարարման միազիծ սխեմայի:

- 2) ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում հանրապետական սփռման առնվազն մեկ հեռուստաընկերության միջոցով հայտարարել նախորդ ամսվա ընթացքում Սպառողի կողմից սպառված Էլեկտրական Էներգիայի քանակի և արժեքի մասին սույն կետի 3-րդ ենթակետով նախատեսված սպասարկման կետերում տեղեկատվությունը հասանելի դարձնելու օրը.
- 3) նախորդ ամսվա ընթացքում Սպառողի սպառած Էլեկտրական Էներգիայի քանակի և արժեքի մասին տեղեկատվությունը տեղակայել իր հետ պայմանագիր կնքած Հայաստանի Հանրապետությունում գործող բանկերի, վճարահաշվարկային կազմակերպությունների, փոստային բաժանմունքների սպասարկման կետերում՝ ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում և կարգով.
- 4) ապահովել առևտրային հաշվառքի սարքի վրա Սպառողի կողմից դրված կնիքի ամբողջականությունը.
- 5) Սպառողի դիմումի հիման վրա ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում և կարգով ստուգել Սպառողի առևտրային հաշվառքի սարքի ճշտությունը և Սպառողին ներկայացնել եզրակացություն.

- 6) իր միջոցների հաշվին կատարել առևտրային հաշվառքի սարքի աշխատանքի ճշտության ստուգման հետ կապված բոլոր ծախսերը, բացառությամբ ԷՄՕԿ-ով նախատեսված դեպքերի,
- 7) ԷՄՕԿ-ով սահմանված դեպքերում և ժամկետում ստուգել և ճշգրտել Էլեկտրոնային առևտրային հաշվիչի ժամերը, այնպես, որ դրանք ճշգրիտ հաշվառեն Հանձնաժողովի կողմից սահմանված՝ գիշերային և ցերեկային ժամերին սպառված Էլեկտրաէներգիայի քանակությունները.
- 8) առևտրային հաշվառքի սարքի աշխատանքի ճշտության ստուգում իրականացնելու դեպքում այդ մասին ԷՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում գզուլացնել Սպառողին՝ համաձայնեցնելով ստուգման ժամկետները.
- 9) Սպառողի դիմումի հիման վրա կամ իր նախաձեռնությամբ ԷՄՕԿ-ով սահմանված դեպքերում և կարգով փոխարինել Սպառողի առևտրային հաշվառքի սարքը և համապատասխան փոփոխություն կատարել սույն պայմանագրում.
- 10) շուրջօրյա գործող 080000180 կամ 180 հեռախոսահամարով Սպառողի դիմելու դեպքում Սպառողին տրամադրել տեղեկատվություն կամ պարզաբանում վերջինիս հարցադրումների՝ ներառյալ Էլեկտրամատակարարման ընդհատումների, դադարեցումների պատճառների և վերականգնման ժամկետների, սպառած Էլեկտրական Էներգիայի արժեքի և քանակության, վճարման ժամկետների, Մատակարարի և Սպառողի իրավունքների ու պարտականությունների և այլնի վերաբերյալ.
- 11) ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում սպառիչ կերպով պատասխանել Սպառողի բանավոր դիմումին՝ բանավոր, գրավոր դիմումին՝ գրավոր, իսկ Էլեկտրոնային փոստով ստացված դիմումին՝ Էլեկտրոնային փոստի միջոցով.
- 12) Սպառողին տեղեկացնել Էլեկտրամատակարարման պլանային և արտապլանային ընդհատումների ու վերականգնման ժամկետների մասին՝ ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում և կարգով.
- 13) Սպառողի դիմումի հիման վրա առևտրային (վերստուգիչ) հաշվիչի Էլեկտրական Էներգիայի հաշվառման և վերահսկման ավտոմատացված համակարգում վերջինիս համար բացել անձնական Էջ և տրամադրել մուտքի անուն և գաղտնաբառ.

#### **4. Մատակարարն իրավունք ունի՝**

- 1) Սպառողից պահանջել վճարելու սպառած Էլեկտրական Էներգիայի դիմաց սույն պայմանագրով, ԷՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում.

- 2) Սպառողից պահանջել մատակարարված էլեկտրական Էներգիան օգտագործել սույն պայմանագրի 5-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված նշանակությամբ:

## **5. Սպառողը պարտավոր է**

- 1) վճարել նախորդ ամսվա ընթացքում սպառած էլեկտրական Էներգիայի արժեքը իր կողմից սպառված էլեկտրական Էներգիայի քանակի և արժեքի մասին տեղեկատվությունը սույն պայմանագրի 3-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված ժամկետում հասանելի դառնալուց հետո՝ ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում.
- 2) մատակարարվող էլեկտրական Էներգիան օգտագործել կենցաղային նշանակությամբ.
- 3) ապահովել իր սպառման համակարգում գտնվող էլեկտրատեղակայանքների պահպանման, սպասարկման և շահագործման անվտանգությունը.
- 4) չխախտել Մատակարարի սեփականությունը հանդիսացող առևտրային հաշվառքի սարքի, դրա կնիքների և տեղակայման արկղի ամբողջականությունը, խախտումներ հայտնաբերելու դեպքում անհապաղ հայտնել Մատակարարին
- 5) իր սեփականությունը հանդիսացող էլեկտրամատակարարվող տարածքը վաճառելու կամ այլ կերպ օտարելու դեպքում դիմել Մատակարարին՝ վերջնահաշվարկ կատարելու, էլեկտրամատակարարումը դադարեցնելու և պայմանագիրը լուծելու համար, ինչի վերաբերյալ Մատակարարը տեղեկանք է տալիս Սպառողին:

## **6. Սպառողն իրավունք ունի՝**

- 1) կնքել առևտրային հաշվառքի սարքը, դիմել Մատակարարին առևտրային հաշվառքի սարքի ճշտությունը ստուգելու համար, մասնակցել դրա աշխատանքի ճշտության ստուգման հետ կապված բոլոր աշխատանքներին, այդ թվում նաև՝ ստուգաչափմանը, ԷՄՕԿ-ով սահմանված կարգով առևտրային հաշվառքի սարքի ճշտության ստուգումը պատվիրել նման իրավասություն ունեցող այլ կազմակերպությունների.
- 2) դիմել Մատակարարին իր առևտրային հաշվառքի սարքը փոխարինելու համար.
- 3) դիմել Մատակարարին՝ մասնակցելու առևտրային (վերստուգիչ) հաշվառքի սարքի ցուցմունքի գրանցմանը՝ ԷՄՕԿ-ով սահմանված կարգով:

### 3. ՄԱՏԱԿԱՐԱՐՎԱԾ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՔԱՆԱԿԻ ԵՎ ԱՐԺԵՔԻ ՀԱՇՎԱՐԿԸ, ԴՐԱ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

---

7. Սպառված էլեկտրական էներգիայի քանակությունը, բացառությամբ սույն պայմանագրի 8-րդ կետով նախատեսված դեպքի, որոշվում է հաշվարկային ամսում Սպառողի ամևտրային հաշվառքի սարքի (N3 հավելված) գրանցած ցուցմունքների տարբերությամբ կամ այդ տարբերությունը չափիչ տրանսֆորմատորների տրանսֆորմացիայի գործակիցների արտադրյալով բազմապատկելու միջոցով:
8. Եթե ամևտրային հաշվառքի սարքն անմիջապես գրանցում է հաշվարկային ժամանակահատվածում ծախսված էլեկտրական էներգիայի քանակը, ապա որպես հաշվարկային ամսվա ընթացքում սպառված՝ ընդունվում է էլեկտրական էներգիայի այդ քանակը:
9. Ամևտրային հաշվառքի սարքի ցուցմունքը գրանցում է Մատակարարը՝ ԷՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում:
10. Ամևտրային հաշվառքի սարքի խախտման (էլեկտրական էներգիայի քանակության սխալ գրանցման) դեպքում սպառված էլեկտրական էներգիայի քանակությունը որոշվում է հաշվարկային եղանակով՝ համաձայն ԷՄՕԿ-ի պահանջների:
11. Հաշվարկային ամսվա ընթացքում սպառողի սպառած էլեկտրական էներգիայի արժեքը որոշվում է Հանձնաժողովի կողմից սահմանված սակագների և սպառված էլեկտրական էներգիայի քանակության արտադրյալով: Հանձնաժողովի կողմից էլեկտրական էներգիայի սակագնի փոփոխման դեպքում նոր սակագինը ուժի մեջ է մտնում Հանձնաժողովի սահմանած ժամկետից:
12. Սպառողը նախորդ ամսվա ընթացքում սպառված էլեկտրական էներգիայի արժեքը վճարում է իր կողմից սպառված էլեկտրական էներգիայի քանակի և արժեքի մասին Մատակարարի կողմից սույն պայմանագրի 3-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն տեղեկատվությունը տեղադրվելուց հետո՝ ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում:
13. Հաշվարկային փաստաթղթում սխալ հայտնաբերելու դեպքում սխալը հայտնաբերած կողմը փաստի մասին տեղեկացնում է մյուս կողմին: Անհամաձայնության դեպքում կողմը ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում մյուս կողմին գրավոր ներկայացնում է իր պարզաբանումները՝ համապատասխան հիմնավորումներով: Հաշվարկային փաստաթղթում սխալի փաստը հաստատվելու դեպքում Մատակարարը ուղղումը հաշվի է առնում հաջորդ ամսվա համար ներկայացվող հաշվարկային փաստաթղթում:

14. Սույն պայմանագրի համաձայն Մատակարարի հանդեպ Սպառողի դրամական պարտավորությունների առկայության դեպքում սպառողի վճարումներն առաջնահերթ ռւղղվում են հիմնական պարտավորության մարմանը՝ ըստ դրա վճարման համար սահմանված ժամկետի վաղեմության, հետո միայն հաշվարկված տույժի մարմանը:
15. Մատակարարի հանդեպ դրամական պարտավորությունների բացակայության դեպքում Սպառողի վճարումները որպես կանխավճար ռւղղվում են ապագայում առաջացող պարտավորությունների կատարմանը՝ համաձայն սույն պայմանագրի 14-րդ կետի:

#### **4. ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԸՆԴՀԱՏՈՒՄԸ ԿԱՄ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ**

---

16. Էլեկտրամատակարարման պլանային և արտապլանային ընդհատումների տարեկան կտրվածքով առավելագույն գումարային տևողությունը սահմանվում է ԷՄՕԿ-ով: Եթե սպառողի (բացառությամբ բնակչության) Էլեկտրամատակարարման սխեման ապահովում է Էլեկտրամատակարարման վերականգնման ավելի կարճ ժամանակահատված, քան սահմանված է ԷՄՕԿ-ով, ապա մատակարարը և սպառողը պարտավոր են սույն պայմանագրի N6 հավելվածում սահմանել այդ ժամանակահատվածը:
17. Էլեկտրամատակարարման պլանային և արտապլանային ընդհատումների ու վերականգնման ժամկետների մասին Մատակարարը տեղեկացնում է ԷՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետներում:
18. Չի թույլատրվում այն սպառողների Էլեկտրամատակարարման պլանային ընդհատում, որոնց Էլեկտրամատակարարումը նախատեսված է իրականացնել 6 կՎ և բարձր լարման երկու և ավելի անկախ սնուցում ունեցող օդային (մալուխային) գծերով կամ կայանի (ենթակայանի) երկու հոծանային համակարգերից կամ սեկցիաներից: Մյուս բոլոր դեպքերում Մատակարարը Սպառողի Էլեկտրամատակարարման պլանային ընդհատումը պետք է իրականացնի աշխատանքային օրերին՝ ԷՄՕԿ-ով սահմանված ժամանակահատվածում:
19. Սպառողը (բացառությամբ բնակչության) և Մատակարարը, փոխհամաձայնեցված կարգով իրավունք ունեն սույն պայմանագրի N6 հավելվածում ամրագրել՝

- 1) ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետներից տարբերվող Էլեկտրամատակարարման պլանային ընդհատումների այլ ժամկետներ (օր կամ ժամեր), եթե դա չի հանգեցնում բնակչության կամ այլ սպառողների համար ԷՄՕԿ-ով սահմանված Էլեկտրամատակարարման պլանային ընդհատումների ժամկետների խախտման.
  - 2) Էլեկտրամատակարարման պլանային ընդհատումների և վերականգնման ժամկետների մասին տեղեկացման այլ կարգ և ժամկետներ:
20. Մատակարարն իրավունք ունի դադարեցնել Սպառողի Էլեկտրամատակարարումը՝
- 1) սպառված Էլեկտրական Էներգիայի դիմաց սույն պայմանագրով սահմանված ժամկետներում և կարգով վճարում չկատարելու դեպքում.
  - 2) եթե Մատակարարին թույլ չի տրվել Սպառողի հետ համաձայնեցված ժամանակացույցով սպասարկել Էլեկտրամատակարարվող տարածքում տեղակայված Էլեկտրատեղակայանքները, այդ թվում՝ Էլեկտրական Էներգիայի հաշվառքի սարքերը՝ անկախ դրանց պատկանելությունից.
  - 3) եթե Սպառողը Էլեկտրական Էներգիան սպառել է առևտրային հաշվառքի սարքի միտումնավոր խախտումով կամ առևտրային հաշվառքի սարքի շրջանցումով.
  - 4) Էլեկտրական ցանցին ժամանակավոր միացման տեխնիկական պայմանների համաձայն՝ Էլեկտրական ցանցին ժամանակավոր միացման համար սահմանված ժամկետի ավարտի դեպքում.
  - 5) Սույն պայմանագրի 3-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հասցեում գտնվող սպառման համակարգից դուրս Էլեկտրական Էներգիան սպառելու դեպքում.
  - 6) Էլեկտրական Էներգիան սույն պայմանագրի 5-րդ կետի 2-րդ ենթակետում նշված նշանակությամբ չօգտագործելու դեպքում:
21. Մատակարարը պարտավոր է դադարեցնել Սպառողի Էլեկտրամատակարարումը՝
- 1) Սպառողի գրավոր դիմումի համաձայն՝ վերջինիս նշած ժամկետում.
  - 2) Էլեկտրամատակարարվող տարածքի (շենքի, շինության) նկատմամբ իրավունք ունեցող անձի գրավոր պահանջի և առաջարկվող ժամկետի ներկայացման դեպքում, եթե Սպառողը չունի տարածքի (շենքի, շինության) նկատմամբ իր իրավունքները կամ իրավունքների ձեռքբերումը հավաստող (հաստատող) փաստաթուղթ՝ բացառությամբ ԷՄՕԿ-ով սահմանված դեպքերի.

- 3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:
22. Էլեկտրամատակարարման սահմանափակումները և վերականգնումն իրականացվում են ԷՄՕԿ-ով և Հանձնաժողովի կողմից սահմանված այլ իրավական ակտերի համաձայն:
23. Պայմանագրում ամրագրված վթարային կամ տեխնոլոգիական հզորություն ունեցող սպառողի կողմից սահմանված ժամկետում վճարում չկատարելու դեպքում վերջինիս Էլեկտրական Էներգիայի մատակարարման սահմանափակումն ու դադարեցումն իրականացվում են ԷՄՕԿ-ով և սույն պայմանագրի N6 հավելվածով սահմանված կարգով և ժամկետներում:

## 5. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ

---

24. Սպառողի Էլեկտրամատակարարման նպատակով օգտագործվող Էլեկտրարտեղակայանքների և առևտրային հաշվառքի սարքերի ձեռքբերման, տեղակայման, փոխարինման և շահագործման ծախսերն իրականացվում է ԷՄՕԿ-ով սահմանված կարգով:
25. Սպառողի կողմից առևտրային հաշվառքի սարքը կնքելու դեպքում, այդ մասին սույն պայմանագրի N3 հավելվածում կատարվում է համապատասխան գրառում:
26. Սպառողի կողմից (բացառությամբ բնակչության) վերստուգիչ հաշվառքի սարք (հաշվիչ) տեղադրելու դեպքում դրա վերաբերյալ տվյալները նշվում են սույն պայմանագրի N3 հավելվածում:
27. Մատակարարն իրավունք ունի Սպառողի կողմից վճարման համար սահմանված ժամկետի խախտման դեպքում ԷՄՕԿ-ով սահմանված կարգով Սպառողից պահանջել կանխավճար կամ իր համար ընդունելի վճարման այլ երաշխիքներ:
28. Էլեկտրական ցանցին ժամանակավոր միացման ԷՄՕԿ-ով սահմանված դեպքերում Սպառողի սպառման համակարգն Էլեկտրական ցանցին միացվում է Մատակարարից ժամանակավոր միացման տեխնիկական պայմաններ (հավելված N<sup>o</sup>1) ստանալու միջոցով՝ ԷՄՕԿ-ով սահմանված կարգով:



## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

---

29. Սույն պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կողմերը պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենքներով, ԷՄՕԿ-ով և սույն պայմանագրով սահմանված կարգով:
30. Եթե Սպառողի Էլեկտրամատակարարումը իրականացվել է սպասարկման որակի սահմանված պահանջների խախտմամբ, ապա Մատակարարը պարտավոր է ԷՄՕԿ-ով սահմանված կարգով Սպառողին վճարել տույժ:
31. Սպառողի (բացառությամբ բնակչության) կողմից սույն պայմանագրի 5-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն վճարման ժամկետը խախտելու դեպքում Մատակարարն իրավունք ունի Սպառողից պահանջել վճարելու տույժ՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար չվճարված գումարի 0.1 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան չվճարված գումարի 10 տոկոսը:
32. Առևտրային հաշվառքի սարքի շրջանցումով Սպառողի կողմից Էլեկտրաէներգիա սպառելու դեպքում սպառված Էլեկտրաէներգիայի քանակը որոշվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով:

## 7. ՖՈՐՍ-ՄԱԺՈՐԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

---

33. Կողմերը սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների խախտման համար պատասխանատվություն չեն կրում, եթե այն հետևանք է ֆորս-մաժորի: Սույն պայմանագրի իմաստով ֆորս մաժոր են համարվում արտակարգ և անկանխելի այն դեպքերն ու հանգամանքները, որոնք առաջացել են կողմերի կամքից անկախ և միևնույն ժամանակ անկախ վերջիններիս գործադրած ջանքերից, խոչընդոտել են պարտավորությունների կատարմանն ուղղված Կողմերի գործողություններին:
34. Սույն պայմանագրի իմաստով արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ են պետական իրավասու մարմինների կողմից ընդունված ակտերը, վերջիններիս գործողությունները կամ անգործությունը, բնական և տեխնաժին աղետները, բնության ուժերի արտասովոր դրսևորումները (այդ թվում՝ ջրհեղեղներ, երկրաշարժեր, փոթորիկներ, պտտահողմեր, կայծակով և ամպրոպով ուղղորդվող հորդառատ անձրևներ, ձնաբքեր, սողանքներ), գործադուլները, հասարակական անկարգությունները, ահաբեկչությունները, պատերազմները, ապստամբությունները: Սույն կետը չի սահմանափակում կողմերի իրավունքը նկարագրվածից բացի այլ արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ ի հայտ գալու պարագայում դիմել Հանձնաժողով՝ դրանք ֆորս-մաժոր ճանաչելու համար:

35. Կողմերը պարտավոր են վերոհիշյալ իրավիճակների մասին անհապաղ տեղեկացնել միմյանց՝ նշելով դրանց հետևանքների վերացման հնարավոր ժամկետները:

---

## 8. ՎԵՃԵՐԻ ԼՈՒՇՈՒՄԸ

---

36. Սույն պայմանագրի առնչությամբ Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ Կողմերից մեկի գրավոր դիմումի դեպքում՝ Զանձնաժողովի միջնորդությամբ:

37. Սույն պայմանագրի 36-րդ կետը չի սահմանափակում Կողմերի իրավունքը՝ վեճերը լուծելու դատական կարգով:

---

## 9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒՄ, ՓՈՓՈԽՄԱՆ ԵՎ ԼՈՒՇՄԱՆ ԿԱՐԳԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

---

38. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է \_\_\_\_\_ ժամկետով: Պայմանագիրը բոլոր դեպքերում կնքվում է անորոշ ժամկետով, եթե ԷՍՕԿ-ով տվյալ դեպքի համար նախատեսված չէ ժամանակավոր պայմանագրի կնքում:

39. Սույն պայմանագրի 38-րդ կետի համաձայն ժամանակավոր պայմանագրի կնքման դեպքում ժամկետը լրանալուց մեկ ամիս առաջ Կողմերից յուրաքանչյուրը կարող է ծանուցել մյուս կողմին պայմանագրի գործողության դադարեցման մասին: Եթե ժամկետի ավարտից հետո Սպառազոր Մատակարարի ծանուցման բացակայությամբ շարունակում է սպառել Էլեկտրական Էներգիա, սույն պայմանագրի գործողությունը համարվում է երկարաձգված՝ նույն պայմաններով և նույն ժամկետով:

40. Սույն պայմանագիրը լուծվում է՝

1) կողմերի փոխադարձ համաձայնությամբ.

2) Սպառողի կողմից միակողմանի՝ այդ մասին Մատակարարին տեղեկացնելու և մատուցված ծառայությունների համար ամբողջությամբ վճարելու պայմանով.

3) Մատակարարի կողմից միակողմանի՝ Չայաստանի Զանրապետության օրենքներով, ԷՍՕԿ-ով և սույն պայմանագրով նախատեսված դեպքերում՝ այդ մասին Սպառողին նախապես տեղեկացնելու պայմանով:

41. Հանձնաժողովի կողմից էլեկտրական Էներգիայի մատակարարման պայմանագրի նոր օրինակելի ձև հաստատվելու կամ գործող օրինակելի ձևում փոփոխություններ կամ լրացումներ կատարվելու դեպքում Կողմերը պարտավոր են Հանձնաժողովի սահմանած ժամկետում կնքել նոր պայմանագիր կամ համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարել գործող պայմանագրում:
42. Սույն պայմանագրում Կողմերի փոխադարձ համաձայնությամբ փոփոխություններ կարող են կատարվել գրավոր, պայմանով, որ չեն հակասում սույն պայմանագրին, ԷՄՕԿ-ին, Հանձնաժողովի ընդունած և այլ իրավական ակտերին:
43. Սույն պայմանագրի փոփոխումը կամ դադարումը Կողմերին չի ազատում մինչ այդ պայմանագրով ստանձնած և չկատարված պարտավորությունների կատարումից:
44. Սույն պայմանագիրը կնքված է հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից, մեկական՝ յուրաքանչյուր կողմի համար:

## **10. ԿՈՂՄԵՐԻ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ**

---

45. Կողմերը պարտավոր են գրությունները, ծանուցումները և այլ փաստաթղթերը միմյանց հանձնել պատշաճ ձևով: Փաստաթղթերը համարվում են պատշաճ ձևով հանձնված, եթե դրանք ուղարկվել են պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ՝ սույն պայմանագրով նշված ծանուցման վայրի հասցեով, կամ հանձնվել են առձեռն՝ ստացականով, եթե առանձին դեպքերի համար ԷՄՕԿ-ով կամ սույն պայմանագրով նախատեսված չէ պատշաճ հանձնման կոնկրետ ձև:
46. Կողմերը պարտավոր են սույն պայմանագրում նշված ծանուցման վավերապայմանների փոփոխության դեպքում այդ մասին գրավոր տեղեկացնել միմյանց այդպիսի փոփոխության պահից 7 օրվա ընթացքում:
47. Այն դեպքում, երբ Կողմը գրավոր չի տեղեկացրել իր ծանուցման վայրի հասցեի փոփոխության մասին, ապա սույն պայմանագրում նշված ծանուցման վայրով ուղարկված փաստաթուղթը համարվում է պատշաճ ձևով հանձնված:

## 11. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍ ԿԱԶՄՈՂ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՑԱՆԿԸ

---

48. Սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելվածներն են՝
- 1) Սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման տեխնիկական պայմանների մասին N1 հավելվածը, որը չի լրացվում բազմաբնակարան շենքերում բնակվող բնակիչների դեպքում.
  - 2) Սպառողի էլեկտրամատակարարման միագիծ սխեմայի մասին N2 հավելվածը, որը չի լրացվում բազմաբնակարան շենքերում բնակվող բնակիչների դեպքում.
  - 3) Սպառողի (Ենթասպառողի) առևտրային (վերստուգիչ) հաշվառքի սարքի տվյալների մասին N3 հավելվածը.
  - 4) Սպառողի (Ենթասպառողի) սնման ուղղության, լարման, առավելագույն թույլատրելի հզորության վերաբերյալ N4 հավելվածը.
  - 5) Մատակարարի էլեկտրական ցանցի և Սպառողի սպառման համակարգի սահմանագատման կետի և էլեկտրատեղակայանքների շահագործման պատասխանատվության սահմանագատման վերաբերյալ ակտի մասին N5 հավելվածը, որը չի լրացվում բազմաբնակարան շենքերում բնակվող բնակիչների դեպքում.
  - 6) 0.4կՎ և բարձր լարման սպառողների (բացառությամբ բնակչության) համար սահմանվող լրացուցիչ պայմանների մասին N6 հավելվածը:

## 12. ԿՈՂՄԵՐԻ ՎՎԿԵՐԱԳԱՅՄԱՆՆԵՐԸ

---

Մատակարար՝

\_\_\_\_\_  
\_\_\_\_\_

Գտնվելու վայրը՝

\_\_\_\_\_  
\_\_\_\_\_

Յեռախոս \_\_\_\_\_

Էլ. փոստ \_\_\_\_\_

ՀՎՀՀ \_\_\_\_\_

Յ/հ \_\_\_\_\_

Բանկ \_\_\_\_\_

Գործունեության լիցենզիա N

\_\_\_\_\_

(ստորագրություն, անուն, ազգանուն)

Կ.Տ.

(ամկայության դեպքում)

Սպառող՝

\_\_\_\_\_  
\_\_\_\_\_

Գտնվելու վայրը (բնակության վայրը)՝

\_\_\_\_\_  
\_\_\_\_\_

Շանուցման հասցեն՝

\_\_\_\_\_  
\_\_\_\_\_

Էլ. փոստ \_\_\_\_\_

Յեռախոս \_\_\_\_\_

ՀՎՀՀ (իրավաբանական անձի  
դեպքում) \_\_\_\_\_

Բանկ \_\_\_\_\_

Յ/հ \_\_\_\_\_

\_\_\_\_\_  
\_\_\_\_\_

(ստորագրություն, անուն, ազգանուն)

**Հավելված N1**  
*Էլեկտրական Էներգիայի մատակարարման պայմանագրի*

**ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՄԱՆ  
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

**ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ԺԱՄԱՆԱԿԱԿՈՐ  
ՄԻԱՑՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

Հզորությունը \_\_\_\_\_ կՎԱ

լարումը \_\_\_\_\_ կՎ

տեղակայված է \_\_\_\_\_ ԿՎԱ հզորության տրանսֆորմատորային ենթակայան:

Մնումն իրականացվում է \_\_\_\_\_

Հաշվառքի սարքերը տեղադրված են \_\_\_\_\_

**Մատակարար՝**

\_\_\_\_\_

(անուն ազգանուն, պաշտոն)

\_\_\_\_\_

(ստորագրություն)

**Սպառող՝**

\_\_\_\_\_

(անուն, ազգանուն)

\_\_\_\_\_

(ստորագրություն)


**Ֆակելված N2**

*Էներգիայի մատակարարման պայմանագրի*


**ՄՊԱՌՈՂԻ ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՄԻԱԳԻԾ ՍԽԵՄԱՆ**

---

Մնող ե/կ \_\_\_\_\_



\_\_\_\_\_ ( ԳԵ, ՏԵ, օ.գ. անվանումը, հենարանի N)



**Մատակարար՝**

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

(անուն ազգանուն, պաշտոն)

\_\_\_\_\_

(ստորագրություն)

**Սպառող՝**

\_\_\_\_\_

(անուն, ազգանուն)

\_\_\_\_\_

(ստորագրություն)

Հաշվառքի սարքի տեղադրման վայրը	Առևտրային հաշվառքի սարք (վերստուգիչ հաշվառքի սարք)				
	Հաշվիչի				Հոսանքի չափիչ
	տեսակը, գործարանային համարը, կնիքի տեսակը, համարը	թույլատրելի հոսանքը (Ա)	անվանական լարումը (Վ)	հաջորդ պլանային ստուգաչափման ամիսը և տարեթիվը	տեսակը, գործարանային համարը, սպառողի կնիքի տեսակը, համարը
1	2	3	4	5	6

**Մատակարար՝**

---

(անուն ազգանուն, պաշտոն)

---

(ստորագրություն)



Հավելված N3

Էլեկտրական Էներգիայի մատակարարման պայմանագրի

ՍՊԱՌՈՂԻ (ԵՆԹԱՍՊԱՌՈՂԻ) ԱՌԵՎՏՐԱՅԻՆ (ՎԵՐՍՏՈՒԳԻՉ) ՀԱՇՎԱՌՔԻ ՍԱՐՔԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

տրանսֆորմատորի					Սպառողի սեփականությունը հանդիսացող կամ իր կողմից տնօրինվող տարածքներում առևտրային հաշվառքի սարքի ամբողջականության պահպանման պատասխանատու կողմը
տրանսֆորմատորի		Լարման չափիչ տրանսֆորմատորի			
ճշտության դասը	տրանսֆորմացիայի գործակիցը	տեսակը, գործարանային համարը, սպառողի կնիքի տեսակը, համարը	ճշտության դասը	տրանսֆորմացիայի գործակիցը	
7	8	9	10	11	12

Սպառող՝

(անուն, ազգանուն)

(ստորագրություն)

**Հավելված N4**

Էլեկտրական Էներգիայի մատակարարման պայմանագրի

**ՍՊԱՌՈՂԻ (ԵՆԹԱՄՊԱՍՈՂԻ) ՄԵՍԱՆ ՈՒՂՈՒԹՅԱՆ ԼԱՐՍԱՆ, ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԹՈՒՑԱՆՏՆԵՐԻ ՀՁՈՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՑՄԱԼ**

N ը.ի.	Մնման ուղղության անվանումը	Հասցեն	Էլեկտրա- ընդունիչների կարգը (I,II,III)	Սահմանա- գատման կետի կարումը (կՎ)	Առավելագույն թույլատրելի հզորություն (կՎտ )	Աշխատանքային օրերի և ժամերի քանակը (ժամ)	Հայտարարված առավելագույն բեռը (կՎտ) աշխատանքային և ոչ աշխատանքային ժամերին
1	2	3	4	5	6	7	8
1							
2							
3							

1. Սույն աղյուսակի 6-րդ սյունակը լրացվում է համաձայն սպառողին տրված տեխնիկական պայմանների: Տեխնիկական պայմանների բացակայության դեպքում 6-րդ սյունակը լրացվում է`
  - 1) 0.22 կՎ լարման սպառողների համար` հաշվիչի թույլատրելի հոսանքի և անվանական լարման արտադրյալով.
  - 2) 0.4 կՎ լարման սպառողների համար` հաշվիչի թույլատրելի հոսանքի, անվանական լարման և հոսանքի չափիչ տրանսֆորմատորի տրանսֆորմացիայի գործակցի արտադրյալով.
  - 3) 6 (10) կՎ և բարձր լարման սպառողների համար` հաշվիչի թույլատրելի հոսանքի, անվանական լարման, հոսանքի չափիչ տրանսֆորմատորի տրանսֆորմացիայի գործակցի և լարման չափիչ տրանսֆորմատորի տրանսֆորմացիայի գործակցի արտադրյալով:
2. Սույն աղյուսակի 4-րդ սյունակը լրացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 21-ի N1943Լ որոշմամբ հաստատված՝ «Էլեկտրատեղակայանքների սարքվածքներին ներկայացվող ընդհանուր պահանջներ» տեխնիկական կանոնակարգում նշված Էլեկտրա-ընդունիչների կարգերի համաձայն:

**Մատակարար՝**

---



---

(անուն ազգանուն, պաշտոն)

---

(ստորագրություն)

**Սպառող՝**

---

(անուն, ազգանուն)

---

(ստորագրություն)

**Հավելված N5**

*Էլեկտրական Էներգիայի մատակարարման պայմանագրի*

**Ա Կ Տ**

**ՄԱՏԱԿԱՐԱՐԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻ ԵՎ ՍՊԱՌՈՂԻ ՍՊԱՌՄԱՆ  
ՀԱՍՏԱՎԱՐԳԻ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ ԿԵՏԻ ԵՎ ԷԼԵԿՏՐԱՏԵՂԱԿԱՑԱՆՔՆԵՐԻ  
ՇԱՐՈՒՄԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

1. Կողմերի սահմանազատման կետն է՝ \_\_\_\_\_  
\_\_\_\_\_ :
2. Կողմերի Էլեկտրատեղակայանքների շահագործման պատասխանատվության սահմանազատման կետն է՝ \_\_\_\_\_  
\_\_\_\_\_ :
3. Սպառողի և ենթասպառողի Էլեկտրատեղակայանքների սահմանազատման կետն է՝ \_\_\_\_\_  
\_\_\_\_\_ :

**Մատակարար՝**

\_\_\_\_\_

(անուն ազգանուն, պաշտոն)

\_\_\_\_\_

(ստորագրություն)

**Սպառող՝**

\_\_\_\_\_

(անուն, ազգանուն)

\_\_\_\_\_

(ստորագրություն)